

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏԻ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ի Ց

29 մարտի 2012 թվականի N 12

6. ՆՈՏԱՐԻԱՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Հավանություն տալ նոտարիատի բնագավառում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման հայեցակարգին՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարին՝ մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել նոտարիատի բնագավառում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման հայեցակարգից բխող միջոցառումների ցանկը:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

S. Մարգարյան

2012 թ. ապրիլի 3
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2012 թ.
մարտի 29-ի նիստի N 12
արձանագրային որոշման

Հ Ա Յ Ե Ց Ա Կ Ա Ր Գ

ՆՈՏԱՐԻԱՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ

I. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. Նոտարիատի բնագավառում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման հայեցակարգը (այսուհետ՝ հայեցակարգ) նոտարական գործողությունների՝ ժամանակակից տեղեկատվական համակարգերի միջոցով իրականացման նպատակների և հիմնական ուղղությունների նկատմամբ պաշտոնական մոտեցումների համակարգ է:

2. Նոտարիատի բնագավառում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրմամբ նոտարին հնարավորություն կտրվի նոտարական գործողությունների կատարման համար մի շարք փաստաթղթեր կամ տեղեկատվություն ստանալ անձամբ, առցանց եղանակով՝ զերծ պահելով դիմողին լրացուցիչ փաստաթղթեր այլ մարմիններից ստանալու պարտականությունից: Բացի դրանից, նոտարիատի բնագավառում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրմամբ հնարավորություն կստեղծվի հանրությանը մատուցվող որոշակի տեսակի ծառայությունների մատուցման «մեկ պատուհանի կանգառի» ներդրում նաև նոտարիատի

բնագավառում, մասնավորապես նոտարի և համապատասխան պետական մարմինների միջև առցանց կապի և համապատասխան համակարգչային ծրագրերի առկայության դեպքում, նոտարը, բացի անհրաժեշտ նոտարական գործողություններից, հնարավորություն կունենա գրասենյակից կատարելու նաև այլ գործառնություններ՝ էականորեն նվազեցնելով հանրությանը մատուցվող ծառայությունների մատուցման ժամանակը:

II. ՆՈՏԱՐԻԱՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ

3. Նոտարիատի բնագավառում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրումն իրենից ներկայացնում է մեկ ամբողջական գործընթաց, որը բաղկացած է երկու փուլերից:

4. Առաջին փուլում նախատեսվում է ներդնել անշարժ գույքի պետական ռեգիստրից (կադաստրից) անշարժ գույքի վերաբերյալ գրանցված սահմանափակումների կամ դրանց բացակայության մասին տեղեկություններ պարունակող տեղեկանքի՝ նոտարի կողմից առցանց ստացման համակարգը: Նշված համակարգի ներդրման համար անհրաժեշտ է բոլոր նոտարներին և անշարժ գույքի պետական ռեգիստրի (կադաստրի) համապատասխան աշխատակիցներին տրամադրել՝

1) էլեկտրոնային ստորագրություններ՝ մի կողմից տեղեկատվությունը հայցող նոտարի, իսկ մյուս կողմից՝ տեղեկանքը տրամադրող համապատասխան աշխատակցի նույնականացումն ապահովելու նպատակով:

2) համակարգիչ, միացված ինտերնետին, և էլեկտրոնային փոստի հասցեներ՝ փաստաթղթաշրջանառությունն առցանց եղանակով ապահովելու նպատակով:

3) նոտարները էլեկտրոնային ստորագրությունները ձեռք են բերում և իրենց գրասենյակներում ինտերնետին միացումն ապահովում են սեփական միջոցներից:

5. Նոտարիատի բնագավառում էլեկտրոնային կառավարման համակարգի ներդրման երկրորդ փուլը նախատեսում է նոտարիատի համակարգում էլեկտրոնային կառավարման հատուկ համակարգի (այսուհետ՝ էլեկտրոնային նոտար) ներդրումը:

6. էլեկտրոնային նոտարի միջոցով հնարավորություն կտրվի ստեղծելու ընթացակարգերի ավտոմատացման միջավայր, որտեղ նոտարական գործողությունների բոլոր փուլերը կիրականացվեն էլեկտրոնային եղանակով:

7. էլեկտրոնային նոտարը կունենա հետևյալ գործառնությունները՝

1) ամբողջական կապ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի հետ: Նման կապի շնորհիվ նոտարը հնարավորություն կունենա կարդալու ռեգիստրում առկա տեղեկատվությունը, այն տպելու, կցելու նոտարական գործին և չպահանջելու հավելյալ փաստաթղթեր, այնպիսիք, ինչպիսիք են՝ իրավաբանական անձի կանոնադրությունը կամ պայմանագրի կողմեր հանդիսացող իրավաբանական անձանց վերաբերյալ այլ տեղեկատվություն, և կապահովի փաստաթղթերի հետ կապված կեղծիքների հնարավորության բացակայությունը (միաժամանակ զգալիորեն կխնայվի ժամանակ, ներկայումս գործող կարգի համեմատ, երբ տվյալները յուրաքանչյուր սուբյեկտի մասով կարդացվում են առցանց): Բացի դրանից, նոտարը հնարավորություն կունենա իրավաբանական անձանց պետական գրանցման ռեգիստրում կատարել իրավաբանական անձի տվյալների փոփոխություն (պետ. ռեգիստրի սպասարկման գրասենյակի գործառնությամբ), ինչը նոտարին հնարավորություն կընձեռի քաղաքացիներին տրամադրելու կորպորատիվ իրավական ծառայություններ:

2) ամբողջական կապ անշարժ գույքի պետական ռեգիստրի /կադաստրի/ հետ: Այն հնարավորություն կտա նոտարին կիրարկելու «մեկ պատուհան» սկզբունքը կամ պատրաստելու, ստորագրել տալու կամ ապահովելու անշարժ գույքի գրավի, առուվաճառքի, իրավունքի փոխանցման կամ այլ պայմանագրերի կատարումը և դրանից բխող իրավունքների պետական

գրանցումը, ստանալու գործարքի առարկա հանդիսացող անշարժ գույքի մասին անհրաժեշտ տեղեկատվություն.

3) ամբողջական կապ շարժական գույքի կադաստրի հետ: Այն հնարավորություն կտա նոտարին կիրարկելու «մեկ պատուհան» սկզբունքը կամ պատրաստելու, ստորագրել տալու կամ կիրարկելու տրանսպորտային միջոցների և այլ շարժական գույքի գրավի, առուվաճառքի, իրավունքի փոխանցման կամ այլ պայմանագրեր, ստանալու գործարքի առարկա հանդիսացող շարժական գույքի մասին անհրաժեշտ տեղեկատվություն.

4) ամբողջական կապ ոստիկանության կողմից վարվող գրանցամատյանների հետ: Նշված կապի ստեղծման արդյունքում նոտարը հնարավորություն կունենա՝

ա. ստուգելու անձի ինքնությունը,

բ. ստանալու գործարքի առարկա հանդիսացող ավտոտրանսպորտային միջոցների մասին անհրաժեշտ տեղեկատվություն.

5) ամբողջական կապ քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնի կողմից վարվող գրանցամատյանների հետ: Նշված կապի ստեղծման արդյունքում նոտարը հնարավորություն կունենա՝

ա. ստուգելու ինքնությունը հաստատող փաստաթղթերի իսկությունը, որպեսզի ապահովի խարդախությունների բացակայությունը՝ կապված նշված փաստաթղթերի հետ,

բ. ավտոմատացված եղանակով ստանալու տեղեկատվություն անձի ամուսնական կարգավիճակի մասին՝ համոզվելու համար, որ գոյություն չունեն երրորդ անձինք (կին և այլն), որոնց իրավունքները կարող են խախտվել և որպես հետևանք՝ վերացնելու այդ հիմքով պայմանագիրը վիճարկելու հնարավորությունը,

գ. տեղեկացնելու բոլոր ազգականներին / անձանց ժառանգության դեպքում, քանի որ նոտարը հնարավորություն կունենա իմանալու բոլոր ողջ ազգականների մասին համապատասխան ծրագրից, և որպես հետևանք, ոչ մի ազգական չի մատնվի մոռացության (հասցեները, օրինակ՝ հիմնականում հասանելի են անձնագրի ռեգիստրում).

6) լիազորագրերի տվյալների բազա: Նոտարական վավերացմամբ լիազորագրերը կտրամադրվեն էլեկտրոնային ձևով՝ նոտարների կողմից, և հասանելի կլինեն առցանց՝ համապատասխան կայքում հատուկ 12 նիշ պարունակող ծածկաբառը մուտքագրելու պայմանով: Պահանջի դեպքում թղթային տարբերակը կտրամադրվի կողմին, բայց լիազորագրի ներքևի մասում նշված կլինի, որ այդ փաստաթուղթը հանդիսանում է բնօրինակի կրկնօրինակը, իսկ բնօրինակը հասանելի կլինի համապատասխան կայքում, հատուկ ծածկաբառը մուտքագրելուց հետո: Փաստաթղթերը կարող են ստուգվել նաև արտերկրից: Բացի դրանից, բոլոր լիազորագրերը կարող են ներբեռնվել շահագրգիռ անձանց կողմից.

7) կտակների տվյալների բազա: Կստեղծվի բոլոր կտակների տվյալների միասնական բազա: Կապահովվի կտակների գաղտնիությունը (ինչպես կտակի գոյության փաստը, այնպես էլ դրա բովանդակությունը): Այն պետք է միացված լինի քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմնին, սակայն այնպես, որ անձի մահվան գրանցումից հետո միայն հղում կկատարվի նոտարական գրասենյակին և դրանից հետո միայն նոտարը (և ազգականները) կարող են բացել կտակը: Նշված համակարգը հնարավորություն կտա ապահովելու մահացածի ժառանգական իրավունքը.

8) ներքին ակտերի բազա: Նոտարները սովորաբար մշակում են տարբեր տեսակի պայմանագրային տեքստեր և դրույթներ, որոնք ներառում են տարբեր պայմանագրերում: Այս համակարգը կապահովի, որ նոտարները կարողանան ստեղծել տիպային դրույթներ, սակայն դրանք արագորեն փոփոխեն անհատականացնելով (որոշակի պահանջներով որոշակի հաճախորդների համար) և արդյունքում զգալիորեն կարագանա գործընթացը գրասենյակում: Որպես արդյունք՝ նոտարը կկարողանա կազմել առավել լավ մշակված տեքստեր՝ մեծ

արդյունավետությամբ: Եվ որպես հետևանք՝ մեկ նոտար հնարավորություն կունենա ծառայություններ մատուցել առավել մեծ թվով հաճախորդների՝ նվազեցնելով հնարավոր հերթերը:

9) **հաշվետվողական գործիք:** Համակարգը կարող է ավտոմատացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը տրամադրվող հաշվետվությունները և կտա տեղեկատվություն նոտարիատի հարկային մասնագետներին/հաշվապահներին՝ պատրաստելու բոլոր հաշվապահական փաստաթղթերը՝ հարկերի ճշգրիտ հաշվարկման և վճարման նպատակով:

10) **այլ գործիքներ:** Ծրագիրը հնարավորություն կտա իրականացնելու նաև հավելյալ գործառույթներ (օրինակ, կարող են քննարկման առարկա դառնալ պայմանագրեր կնքելը՝ հիմնվելով անձը հաստատող փաստաթղթերի (նույնականացման քարտերի) և էլեկտրոնային ստորագրության, ինչպես նաև «Skype» ծրագրով հաղորդակցության վրա, էլեկտրոնային հերթերի համակարգի, նոտարական գրասենյակներում տեսախցիկների (մուտքի մոտ) միջոցով, որպեսզի մարդիկ առցանց տեսնեն կա՝ հերթ, թե՛ ոչ և այլ ծրագրեր):

III. ՆՈՏԱՐԻԱՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԲԱՂԱԴՐՈՒՄԸ

8. Նոտարիատի բնագավառում էլեկտրոնային կառավարման համակարգը բաղկացած կլինի՝

1) կենտրոնական սերվերից, որը տեղակայված կլինի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունում կամ Հայաստանի Հանրապետության կառավարությունում, որը նաև պատասխանատու կլինի վերջինիս անվտանգության համար (տեղեկատվությունը պետք է պարբերաբար պատճենվի ռեզերվային սերվերի վրա):

2) վերջնօգտագործողի սարքավորումներից (համակարգիչ, քարտի ընթերցող, սկաներ, վեբ-տեսախցիկ, պատճենահանող սարք և այլն), որոնք պետք է տեղակայված լինեն բոլոր նոտարական գրասենյակներում (պետք է գնվեն յուրաքանչյուր նոտարի կողմից, ըստ իրենց նախընտրությունների, սակայն նախօրոք սահմանված նվազագույն չափանիշներին համապատասխան):

3) համապատասխան համակարգչային ծրագրից, որը կտեղակայվի սերվերում (ամպի տեխնոլոգիա/cloud technology), սակայն ծրագրի սահմանափակ բաղադրիչները պետք է տեղադրվեն յուրաքանչյուր վերջնական օգտագործողի համակարգչի վրա (հատկապես նոտարների ներքին փաստաթղթերը): Այնուամենայնիվ, հստակ գործերը պետք է փոխանցվեն վերջնական օգտագործողի սարքավորմանը համոզված լինելու համար, որ միացման ընդհատումը չի խանգարի աշխատանքին (այս տեսակ համակարգի համար չի պահանջվի կայուն, մշտական, բարձր որակի ինտերնետ կապ):

9. Սարքավորումային և ծրագրային պաշտպանությունը պետք է նախատեսված լինի (երկուսն էլ՝ ստատիկ և դինամիկ), նաև պետք է ապահովված լինի, որ տվյալները լինեն պաշտպանված (ըստ ցանկության):

10. Վերջնօգտագործողի սարքավորումը և կենտրոնական սերվերը պետք է միացված լինեն առցանց (VPN) կամ տվյալների փոխանցման ծառայությունների միջոցով (կապի համար գինը պետք է վճարվի նոտարների կողմից):

IV. ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

11. Ծրագրի ներդրման գումարը նախնական հաշվարկվել է մոտավորապես 250 հազ. եվրո (հիմնված ՀՀ-ում գործող և նմանատիպ ծրագրեր իրականացրած 5 կազմակերպությունների տրամադրած գնային առաջարկների հիման վրա), ինչը չի ներառում վերջնակետային

սարքավորումները և ինտերնետային կապի ապահովումը (վերջիններս պետք է գնվեն նոտարների կողմից՝ առանձին):

Հայեցակարգի ֆինանսական ապահովումն առաջարկվում է իրականացնել ԵՄ-ԵԽ-ՀՀ համատեղ ծրագրի ֆինանսավորման շրջանակներում (access to justice in Armenia արդարադատության մատչելիությունը ՀՀ-ում): Ֆինանսավորման մասին համաձայնությունն ընդհանուր առմամբ առկա է, և ավարտին է մոտենում գնման գործընթացի փաստաթղթերի մշակման փուլը: